հագին տանին։ Եւ յորժամ սկսաւ Փափն
պատարագել, եւ դպիրքն եղանակէին։ Այլ եւ
ունէր Փափն վարպետ մի եւ ժամասաց, դա- 105
տրմ մի որ խիստ անուշ ձայն ունէր, նման
հրեշտակաց կամ թէ Մամասայ. եւ յորժամ
նա երգէր՝ այլքն լռէին. եւ ասին թէ սա յի-
սուն դեկան ոսկի ունի օլոֆայ ի Փափէն ա-
մէն շաբաթ։ Եւ այսպէս ամէն եկեղեցի կայ
վարպետ մի քաղցրանուագ, բայց սորա նման 110
չտեսաք. ով ոք լսէ՝ զմայլի եւ թըմրի։ Իսկ
հնչմունք զանկակաց եւ ձայն երգէհոնաց,
փողոց, թմբկաց եւ այլ նուագարանաց լսելի
լինէր ի քաղաքն ամենայն. եւ խլացուցանէր 115
զունկն լսողաց եւ զուարճացեալ խայտային
հոգով եւ մարմնով մարդիք։

Եւ իբրեւ կատարեաց զսուրբ պատա-
րագն՝ հաղորդեցոյց զիշխանս եւ զորս ինքն
կամեցաւ ի ձեռաց իւրոց։ Զոր աղաչեմ 120
Տեառն Աստուծոյ օգնական լինել ամենայն
հաւատացելոց, մանաւանդ մեզ Հայոց։ Եւ
զկնի պատարագին բերին մաֆան եւ նստաւ ի
վրայ. եւ իբրեւ մտաւ ի սարան, սկսան թո-
փեր նետել, թուֆաքնի եւ փողս հարկանել, 125
շատլիս եւ ուրախութիւն առնելով. եւ զին-
վորքն եւ ազատքն զգեցեալ էին զրեհ եւ սա-
զաւարաս ի գլուխս, ոմանք մերկ սուր երկ-
սայրի ի ձեռս ունելով, այլք գեղարդք, վա-
խանք եւ նիզակք, որ փայլզփայլի տային եւ ի 130
ճառագայթից արեգական պչնուին աչք հայո-

124 վրա։ — 130 փայլփայլ։